ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 25 >> 01 2013թ. N: 09-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 79-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 9-րդ, 15-րդ և 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մեղրաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի նիստի թիվ 5 արձանագրությունը.

որոշում եմ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մեղրաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝ մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Հրանուշ Գալստյանի լիազորությունները և նրա փոխարեն խորհրդի կազմում հաստատել Սամվել Բարսեղյանին:
2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին>> N 51-Ա որոշման N 115 հավելվածում <<Գալստյան Հրանուշ>> բառերը փոխարինել <<Բարսեղյան Սամվել>> բառերով:

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ՝ճիշտ է՝